Հավելված
ՀՀ վարչապետի N 591 - Ա որոշման

ՑԱՆԿ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ՀՕ-25-Ն ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտն ընդունելու առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը | Իրավական հիմքը |
|---|---|---|---|---|---|
| 1. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1282-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2023 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ | Պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ6-րդ» ենթակետ, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աշխատակազմ ներկայացնելը | | | | փետրվարի 23-ի ՀՕ-25-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետ և 3-րդ հոդվածի 1-ին կետ |
| 2. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N 985-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2023 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ17-րդ» ենթակետ, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի փետրվարի 23-ի ՀՕ-25-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետ և 3-րդ հոդվածի 2-րդ կետ |
| 3. | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2024 թվականի պետական բյուջեի հաստատումից հետո մեկամսյա ժամկետում | Ֆինանսավորում չի պահանջվում | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մաս, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մասին» 2023 թվականի փետրվարի 23-ի ՀՕ-25-Ն օրենքի 1-ին հոդված |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ